ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 157[2]. Սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելը**

Սահմանված կարգի խախտումներով ճարտարապետահատակագծային առաջադրանքներ տրամադրելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:
Ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը, ինչպես նաև դրա տրամադրման համար ինժեներական սպասարկում իրականացնող ծառայության հարցման պատասխանը, Կառավարության սահմանված ընթացակարգերի և ժամկետների խախտմամբ կամ դրա տրամադրման մերժումն՝ օրենսդրությամբ չնախատեսված պատճառաբանությամբ՝
առաջացնում է նախազգուշացում համայնքի ղեկավարի նկատմամբ:
Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

~~Հոդված 1573. Կառուցապատողներին ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, տեխնիկական պայմաններ տրամադրելու կարգը խախտելը կամ ոչ հավաստի տվյալներ տրամադրելը~~
~~(վերնագիրը փոփ. 24.05.06 ՀՕ-72-Ն)~~
~~-~~
~~Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից կառուցապատողներին օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, տեխնիկական պայմաններ տրամադրելու կարգը խախտելը կամ ոչ հավաստի տվյալներ տրամադրելը՝~~
~~- առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:~~
~~(1573-րդ հոդվածը լրաց. 23.10.02 ՀՕ-438-Ն, փոփ. 24.05.06 ՀՕ-72-Ն)~~

Հոդված 157.3. Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայության կողմից էլակետային տվյալներ կամ տեխնիկական պայմաններ տրամադրելու ընթացակարգի կամ ժամկետների խախտելը կամ ոչ բարենպաստ պայմաններում տրամադրելը

Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայության կողմից Կառավարության սահմանված ընթացակարգի և ժամկետների խախտումը կամ բարենպաստ պայմաններում էլակետային տվյալներ կամ տեխնիկական պայմաններ չտրամադրելը՝ առաջացնում է նախազգուշացում ինժեներական սպասարկում իրականացնող ծառայության նկատմամբ:
Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ինժեներական սպասարկում իրականացնող ծառայության նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: